

ԳՐԵՎԱՆԻ

ՄՐԳԱ

ՈՒՅՈՒՆԻԿԵՐԸ



891.99 Մ  
Մ-64

1936

ՍԱԽԵԼԱՎԱՐ

14 FEB 2011

30 MAY 2011

891.99 Ա. Կ.  
5-64

ԳԵՎՈՐԳ ՄԵՍՅԱՆ

4018 4010  
40213

# ՄԵՐ ԾԻԾԵՌՆԱԿՆԵՐԸ



ԵԼՊԱՆ

1936

28.06.2013

11242

## ՄԵՐ ԾԻԾԵՌՆԱԿՆԵՐԸ

Այս տարին գարնան հետ մեզ մոտ մի զույգ ծիծեռնակներ ել յեկան։ Փոքրիկ, սկ ատլասե շորեր հագած, կարմիր փողկապները կտուցների տակ։ Ի՞նչ սիրուն թոշուններ են ծիծեռնակները։ Դեռ մենք նրանց չճանաչեցինք, վորովհետև այս տարի շատ եյին ուշացել։ Բայց հետո, յերբ սկսեցին բարձրաձայն աղմկել, բողոքել, պտույտներ գործել հին բնի շուրջը, վիճել ճնճղուկների հետ՝ նոր հասկացանք, վոր դրանք մեր հերփա ծիծեռնակներն են, բողոքն ել՝ բնի համար ե։

Ո՞հ, ի՞նչ աներես թոշուններ են ճնճղուկները, վոր խմանաք. վոչ իրենց կարգին պահել գիտեն, վոչ ել թե հարգում են ուրիշի աշխատանքը։ Յեկել, մտել են ուրիշների բունը՝ շինած, պատրաստ ու, իրենք ել, իբր թե մի բան են վրան ավելացրել—բան չունես։ Ծույլ, գող ու անշնորք. ել թել ասես, բրդի կտոր, մի չիթ, մի խոտ—ի՞նչ ձեռներն ե ընկել, ի՞նչ պատահել ե, բերել մեջն են կոխել, կեսն ել թողել կախ բնկած։ Անշնորքացրել են գեղեցիկ, կանոնավոր

Գառ. խմբագիր՝ Ռ. Աղաբաբ  
Տեխ. խմբագիր՝ Գ. Բարուրյան

Краснозн. тип. им. А. Ф. Мясникова из-ва „Заря Востока“  
Типлит Г-1325 Заказ 1084 Тираж 1000

շինած բունք: Ճնճղուկները՝ վիճաչիներ են ծիծեռնակների հետ համամատած, ինչ բուն շինողներ:

Յերկու-յերեք որ իրար հետ վիճում, բարկանում ելին նրանք, թե ինչպես անեն, վոր լավ լինի: Հայր ծիծեռնակն առաջարկում եր՝ վրեժ լուծել, հայտնել իրենց ընկերներին, վոր գանողնեն. կամ թե՝ թողնել, հեռանալ ուրիշ տեղ ու նոր բուն շինել:

Իսկ մարին՝ ավելի հանդարտ եր և ավելի յերշտապում:

Ել մեր գնանք,— ասում եր նա,— առանց են ել ուշացել ենք. աշխարհի գործ ունենք. պետք ե բուն շինենք, ձու ածեմ, թուխս նրատենք, ձուտեր հանենք, պահենք, մեծացնենք, վոր աշխանն ել գնալիս՝ ընկերից, յերամից յետ շմանք:

Հայր ծիծեռնակը, առանց վիճելու զգաց, վոր ձիշտ ե ասում մարին. ժամանակը չափած-ձեւված ե իրենց համար ու վեճն ու աղմուկը թողած՝ վորոշեցին նոր բուն շինել: Մի յերկու որ ել սրա համար կորցրին: Հեշտ բան հո չի բնատեղ ընտրելը: Ճնճղուկների պես հո չեն—անփույթ, փնթի, վոր վորտեղ մի ձեղք տեսնեն, մտնեն մեջը: Բնի տեղը պետք ե հարմար լինի,

ապահով անձրեկից, կատվից և... և գիտե, կասվի, հազար ու մի վտանգից:

Նորից արուն առաջարկեց ուրիշ տեղ տեսնել, թողնել եղ պատշգամբը, բայց շուտով համաձայնեց մարիի հետ, վոր եսպես հարմար տեղ դժվար ե գտնելը. յերեխաները չեն հալածում, տեղը բարձր ե, ծածկի տակ, հորիզոնն առաջներին բաց, և, վերջապես, են յերկաթալարը, վոր ձգված ե բնի մոտ, յերկու սյուների արանքում, ինչ ասես արժե: Առավոտները գեռ արել չծագած, կնստեն զույգով, կերպեն միասին ու իրենց ճուտերն ել՝ թե քնի մեջ, թե արթուն՝ կլսեն այդ ձայնը... համոզում եր մարի ծիծեռնակը:

Յերկաթալարի հանգամանքը ճիշտ վոր գերակշռեց և վճռեց հարցը: Ինչ յեղել եր, յեղել՝ ուկատք ե հաշտվել. իրենք գործի մտըդ են, աշխատասեր:

Ու նրանք սկսեցին նոր բուն շինել նսից քիչ հեռու, ու թուան միասին ցեխի:

Նրանցից պակաս զբաղված չելինք և մենք: Զափազանց հետաքրքիր եր մեզ համար, թե նըրանք ինչպես պետք ե սկսեն ու ինչպես վերջացնեն բունը. և արդյոք նույնքան գեղեցիկ դուրս կդար, թե պատահմամբ եր այնքան գեղեցիկ հին բունը: Յեկ ամեն առավտա, հենց

մենք վեր եյինք կենում թե չե—իսկ մենք շատ  
վաղ եյինք վեր կենում—վազում եյինք դեպի  
պատշգամբ և ամեն անգամ կիսատ քնի պոնդին  
տեմնում եյինք նոր ցեխի թաց շերտը, վոր ա-  
վելանում ու ավելանում եր շարունակ:


Մոտ յերկու շաբաթ տևեց այդ հետաքրքիր  
ու քրտնաշան աշխատանքը, վոր տանում եյին  
յերկու փոքրիկ, բայց յեռանդուն ու բարեխիղճ  
մշակներն առավոտից մինչև իրիկուն։ Շատ ան-  
գամ եմ պառկել յես մեջքիս վրա անշարժ ու  
ցածից վեր աչքս ձգել նրանց։

— Զիրտնացնեք, չխանգարեք, — ասել եր  
հայրս մեզ. — Նայեցեք միայն ու տեսեք, թե վճնց  
են աշխատում։

Մենք նայում եյինք ու մեր աչքի առջև ըս-  
կըսկեց ու բսավ նրանց նոր, սիրուն բունը բո-  
լորովին նման հնին։ Զարմանում եյինք նրանց  
այդքան կանոնավոր ու նպատականարմար աշ-  
խատանքից։ Ո՞վ եր սովորեցրել նրանց։ Աշխա-  
տանքը բաժանել եյին իրենց մեջ. հայր ծիծեռ-  
նակը ցեխ եր կրում, մարին՝ կպցնում, սղալում  
եր իր սիրուն կտուցով։

Ցերքեմն նրանք փոխում եյին իրենց դերե-  
րը, վոր չձանձրանան։

— Տեսնում եք, — ասում եր հայրս, — են յեր-  
կընքի թռչունքն ել առանց աշխատանքի չեն ապ-



րում։ Նայեցեք, վոր դուք ել սովորեք։ Ծույլ  
մարդիկ կարծում են, թե նրանք անզործ են։

Բունը պրծնելուց հետո մարին ձու ածեց ու  
պինդ նստեց վրան։ Շատ անդամ յերկուսով եյին  
նստում, շատ անգամ հայրն եր փոխարինում,  
վոր մարին գնա, մի բան ուտի, մի բան խմի։

Իսկ գիշերները յերկուսով միասին, մինը դուր  
խը մեկ, մյուսը դեպի մյուս կողմն արած, ամուր  
սղմվում եյին իրար, ծածկում ձվերը, վոր  
չփչանան ու ժամանակին ձագերը դուրս գան:  
Ի՞նչ սիրով զույգեր եյին նրանք: Մոտ յերեք  
շաբաթ թուխս նստեցին յերկուսով:

Մեկ ել մի որ տեսանք բնի մեջ մի դեղին  
կտուց բացվեց շատ լայն: Մյուս որը՝ մեկից ա-  
վելի, իսկ մի յերկու որից հետո՝ հինգը: Ամե-  
նահետաքրքիր տեսարանը մեզ համար և ամե-  
նայեռանդուն աշխատանքը ծիծեռնակների հա-  
մար՝ սկսվեց զրանից հետո: Վողջ որը, առավո-  
տից մինչև յերեկո, սլաքների պես սուրում եյին  
զույգ ծիծեռնակները յետ ու առաջ: Յեզ ինչ-  
պիսի զվարճությամբ եյին կատարում նրանք  
փրանց այդ պարտականությունը: Հազիվ հաս-  
նում եյին բնի պանդին, նրանց գեմ՝ բացվում  
եյին հինգ հատ լայն, կարմիր բերաններ՝ զե-  
զին, վոսկե ողակներ հագած կտուցներով և ժըվ-  
ժվում.

— Ի՞նձ. .

— Ի՞նձ...

— Ի՞նձ...

Աղերսում եր ամեն մեկը նրանցից, ծիծեռ-  
նակը հանգիստ նայում եր բոլոր բերաններին  
ու ժպտում, վոր նրանք այնքան ագահ են ու

ամեն մինը միայն իր մասին ե մտածում: Արագ  
կոխում եր նա իր կտուցը, բերած վորոի հետ  
միասին, նրանցից մեկի բերանը շատ խոր ու  
թերերը կիսաբաց մի սլաք կազմում, վայր ընկ-  
նում բնի բարձրությունից: Զեր ել շարժում թե-  
վերը. ասում ես հրես, կգիպչի, կխփի զետ-  
նին, բայց չե, զետնին չհասած, ուղղում ե ի-  
րեն, ձկուն վոնց վոր մի հմուտ լողորդ, գեպի  
ջուրը ննաւող. ինչ լողորդ, աղեղից պոկված մի  
նետ ասա – ձգվում եր ուղիղ, անասելի արա-  
գությամբ, ու թաղվում հորիզոնի անսահման կա-  
պույտում:

Անմիջապես հետո, վայրկյան չանցած, մի  
ուրիշ նետ գալիս, մեխվում ե բնի պոնդին. սա  
յել հայր ծիծեռնակն ե, կտուցը լիքը: Հինգ բե-  
րանները, թեև վոչինչ չեն տեսնում զեռես,  
բայց թերերի ձայնից, և ելի, իրանք ել չգիտեն  
ինչից՝ իմանում եյին, վոր նորից յեկավ, ու նո-  
րից սկսեցին նախկին յերգը.

— Ի՞նձ.

— Ի՞նձ

— Ի՞նձ...

Նորից բացվում են բոլոր հինգ կարմիր բե-  
րանները՝ զեզին ժապավենով շրջեզրված:

— Ում հերթն ե, ում տաժ, – հարցնում ե  
նրանց, իբր թե ինքը չգիտե:

— Ի՞նձ

— Ի՞նձ

— Ի՞նձ...

Աղմկում են հինգն ել:

Ախ գուք ազահներ, ստախոսներ, ժպտում ե հիմա յել սա, ու անսխալ իր կտուցը կոխում հերթի սպասող սովածին:

Սա նույն ձեռվ սլանում ե բնի պոնդից ցած, ինչպես վոր քիչ առաջ իր ընկեր մարին, ու քիչ հետո, նույն ձեռվ մեխվում ե բնի պոնդին մարին՝ վոնց վոր քիչ առաջ իր ընկեր արուն: Սա ևս լուսմ ե նույն ախորժալուր ժվժվոցը՝

— Ի՞նձ

— Ի՞նձ

— Ի՞նձ...

Բայց այդ ձայները չեն կարողանում սիած լիցնել վոչ հայր և վոչ մայր ծիծեռնակներին, թեև նրանք ճանապարհին չեն ել հսնդիպել իրար. բայց մի ներքին մղումով, հենց ենակես, իմանում են միամնամից, թե վարն ե ստացել կերը և ով պետք ե ստանա հիմտ:

Շարունակ դժգոհում են, բողոքում ձագուկները, վոր այնքան ուշ-ուշ են ստանում ուտելիք: Տված տեղն ել ինչ ե վոր,—մտածում են նրանք, — վոչ բերանդ ե մի բան իմանում, վոչ փորդ — մի փոքրիկ մժեղ, կտուցի ծերի չափ հազիվ: Բայց դե ինչ նեղանային նրանցից ծնողները:

Գիտեյին, վոր չեն հասկանում. գիտեյին, վոր յեղբ մեծանան՝ իրանք ել կզգան, վոր այնքան ել հեշտ չի հինգ լայն ու ագահ բերաններ լցնելը այդքան փոքրիկ մժեղներով: Դեռ իրանք ել պետք ե մի բան ուտեյին, թե չե: Բա վորսաւը: Հեշտ ե: Ինչ գիտեյին, թե մի յերկու հատ վորսաւու համար տասնյակ կիլոմետրներ պետք ե կտրեյին վեր ու վար, վոլոր-մոլոր, գծմծեյին ողն որն ի բուն:

\* \*

Իրիկունները պատմում եյինք մեր ապավորությունները հայրիկիս ծիծեռնակների մասին:

— Լավ ուշադրություն զարձրեք, յերեխեք, — ասում եր նա, — մտներդ պահեցեք տեսածներդ, վոր գնաք դպրոցումը պատմեք:

Հետեյալ զարմանալի բանը, վոր մենք նկատեցինք՝ գա նրանց մաքրասիրությունն եր: Մայրը որական մի քանի անգամ մաքրում եր բունը: Այս ել ինչպես: Մեկ ել կտեռնեյինք, բնի պոնդին կանգնած, կթաղվեր գլխիվայր բնի խորքը, վոնց վոր հացթուխը՝ թոնըի մեջ, պոչը կմնաց զուրս ցցված՝ պատառաքաղի նման:

Քիչ հետո կուզգվեր, կտցում ինչ վոր բան պահած ու, կթուչեր: Սկզբում զլինի չեյինք ընկնում, բայց հետո նկատեցինք, վոր միշտ, բնից

քիչ հեռանալով, վայր և ձգում բերանի բանը:  
Յերբ կրկնվեց այս մի քանի անգամ բնի խորքը  
ցցվելուց հետո՝ մենք ուզեցինք ստուգել: Յեկ  
ինչ եք կարծում. բանից դուքս յեկավ, վոր ձա-  
գուկների աղբն եք հավաքում ու ցած ձգում  
բնից հեռու:

Յերբ այս բանն ել պատմեցինք հորս՝ նա  
ժպտաց:

— Եղ դեռ վոչինչ,—ասաց,—դեռ ձագուկ-  
ները փոքր են՝ ծնողներն են մաքրում. վոր մե-  
ծանան, դուք են վախտը տեսեք:

Ու մեզ շասեց, թե են վախտը ինչ պետք է  
տեսնեյինք:

Մի որ փոքր յեղբայրս բնին նայելիս, սկսեց  
աղաղակել.

— Վայ, շնորհ, շնորհ, Սուրիկ, շնորհ:

Մինչև յես տանից դուքս յեկա, նրա զար-  
մանքն անցավ ու հանդարտվեց:

— Ի՞նչ ե, հարցըրի:

— Ռւշացար, տեղը գնաց, այ, տեսնում ես,  
— ցույց տվավ նա ինձ բնի ներքեր, հատակին կա-  
թած թարժ աղբը:

Բան չհասկացա:

— Ճուտն եր: Շուռ յեկավ, հանեց իրեն կի-  
սով չափ բնից՝ ցած ձգեց ու նորից մտավ  
բունը:

Այնուհետև հաճախ եր կեղտոտվում հատակի  
այդ մտու, և բոլորս ել նկատում եյինք ձագե-  
րի այդ վարմունքը:

Այլևս նրանց ծնողները կարիք չունեյին. հոգ  
տանելու բնի մաքրության մասին:

Հայրս հաճույքով լսեց մեր դիտողության  
մասին ու բացատրեց, վոր կենդանիներն այդ-  
պիսի շատ գործողություններ ունեն, վոր թեւ  
անգիտակցաբար են անում, բայց ոգտակար են  
նրանց համար: Դրանք կոչվում են բնազդ: Մենք  
նոր հասկացանք այնքան վարպետորեն ու իրար  
նման շինված բների գաղտնիքը:

— Բա վոր ձեզ ասում եյի, դրանք ձեզ շատ  
բան կսովորեցնեն:

— Համա, հիշեցինք ու զարմացանք նոր:

Ամեն որ նեղանում եր բունը նրանց հա-  
մար: Շուտով նրանց գույները սկացան. վետ-  
րակալեցին. բերանների գեղին յերիզը անհետա-  
ցավ: Ել բնումը հանգիստ չեյին նստում առաջ-  
վա պես: Վողջ որն իրար հրիբում եյին, կանգ-  
նում բնի վրա, մեկնում, ձգում հերթով դեռ  
մեկ, հետո ել մյուս թեր: Փորձում եյին բա-  
նեցնել թերը, համոզվելու համար, թե պետք  
են արդյոք, դիմացկուն: Այս փորձերի համար  
նրանք կանգնում եյին բնի ափերին և դիտ-  
մամբ կորցնում: հավասարակշռությունը, վայր

ընկնելու պես, և թեհերի ոգնությամբ ուղղվում,  
բարձրանում նորից: Ծիծաղելի եյին նրանք այդ  
հասակում: Ինչպես եյին շտապում թռչելու, ինչ-  
պես եյին ուղում փորձել իրենց մեջ ամեն որ  
կուտակվող ույժը. բոլոր ջահելներին հատուկ մի  
ցանկություն: Շուտով ուղում են գործի մտնել  
մեծերի պես, սեփական ուժերով: Զագերից մի-  
նը ամենահամարձակն եր. միշտ բնից դուրս  
կանգնած բաց ու խուփ եր անուժ թեհերը: Մի  
անգամ ել մայրը թռչելիս, ինքն ել թռավ յե-  
տերից: Ո՞հ, վորքան սարսափելի ու միաժամա-  
նակ հաճելի բան զգաց նա այդ առաջին թոփշ-  
քով: Նա զգաց, վոր ազատ եր, ինքնուրույն:  
Բայց մայրը վախեցավ նրա տեղ և նստեց մո-  
տիկ ձգված յերկաթալարին: Զագն ել նստեց:  
Ի՞նչ ծիծաղելի յեր, միամիտ, կատարյալ մի յե-  
րեխա: Նրա պոչը դեռ յերկճղի չեր դառել. փը-  
ռում եր շուտ-շուտ հովհարի պես և փորձում  
հավասարակշռությունը: Դրանից հետո դժվար  
յեղավ այդ համարձակին բնումը տեղավորելը:  
Չեր ազգում ել մոր խրատներն ու ցուցմունք-  
ները: Նա թռչել եր ուղում. միշտ կանգնած եր  
ծնողների կողքին, բնի վրա: Յերեկները փոր-  
ձեր եր անում բնից դեպի յերկաթալարը, և հե-  
տո, դեպի բունը: Մայրն ու հայրն ինչքան բար-  
կանում, սասառում եյին՝ նա չեր լսում այլն:

Այս բանը նկատում եյինք նրանից, վոր վիճում,  
կտցահարում եյին, թե՝ «զեռ ժամանակը չի,  
կհոգնես, վայր կընկնես...»: Բան չունես:

Մի որ ել սիրտ արավ ու թռավ ավելի հե-  
ռու, մինչև հարեան տունը, ու նստեց տանիքի  
ծայրին. մյուս որն այլես մենք նրան բնումը  
չտեսանք: Մայր ու հայր ծիծեռնակներն ել չե-  
յին անհանգստանում—համոզվեցին, վոր հասու-  
նացել ենա, վոր հարկավոր քննությունից պար-  
զերես եր դուրս յեկել: Այդ ել ցանկանում  
եյին նրանք:

Հետեյալ մի քանի որերին, մյուս չորսն ել  
սկսեցին անհանգստանալ: Նրանք ել սկսեցին  
նույն վարժություններն անել, ինչ վոր իրենց  
անդրանիկ յեղբայրը: Առանձին մի հանդիսավո-  
րություն ուներ այդ շրջանը թե ծնողների և թե  
մագերի համար...

Յեվ վորքան յեղավ մեր զարմանքն ու ափ-  
սասանքը, յերբ մի առավոտ, հակառակ սովորա-  
կանի, բունը տեսանք դատարկ:

— Վաս, ծիծեռնարկները չկան, ուր են,  
դիմեցինք մայրիկին:

— Թույրին,—պատասխանեց մայրս.—բա չե-  
յիք տեսնում յերեկ ամբողջ որը նրանք դրանով  
եյին զբաղված...

— Ել չեն վերադառնա, —հարցրինք նորից:



— ԶԵ, ՃԵՂ ՄԱՏԱԴ. ԵԼ ԻՆՉՈՒ յԵՆ ՎԵՐԱՊԱՌ-  
ԱՌԵՄ. պահեցին, մեծացրին իրենց բալիկներին  
ու հիմա առան, թռան։ ԿՅԱՆ ՄԵՂ ՄՈՏ ՄԻՆՉԵ

ամառվա վերջը ու աշնան սկզբներին՝ հայդա, կրոչեն դեպի տաք յերկրներ...

— **Բա բնինր:**

— Բունը կմնա մեղ մոտ մինչև յեկող տարի, ու թե յետ յեկան նրանք վողջ-առողջ, կարող են նորից իրենց բունը գալ:

44018 1010  
40248

Մենք, չգիտեմ ինչու, հոգոց հանեցինք:  
Մեզ թվաց, թե շատ մոտիկ ընկերներ ենք  
կորցրել, վոչ թե անքան ծիծեռնակներ: Ըստե-  
լացել եյինք իրար և չեյինք խանդարում մի-  
մյանց:

Շատ անգամ այնուհետև յես ու յեղայրս,  
Գուրզենը կանգնում ելինք ու մատներս մեկնած  
ցույց տալիս այն հաղարափոր ոև պաքների վրա,  
փոր լողում ելին անսահման կապույտի մեջ, թե  
արդյոք նրանցից փորոնք են մեր ծիծռոնակ-  
ները: Բայց նրանք բոլորն ել միաձև ելին,  
միատեսակ, և վոչ թե միայն մենք չելինք ճա-  
նաչում նրանց, այլև գուցե և ծնողներն ու ձա-  
գերը չելին ճանաչում իրար այս:

Աշնան սկզբներին նրանց խաղն ու թռիչքն  
ավելի այսուժացավ, ափելի հանդիսավոր դար-  
ձավ: Յերևում եր, վոր ինչ-վոր նոր բանի յեն  
պատրաստվում: Յեկ ինչպես վոր ամառվա մի  
առավոտ մենք նրանց բունը տեսանք դատարկ,  
այնպես ել աշնան մի որ յերկնքի կապույտը

դատարկվեց, կորան այն անթիվ աշխույժ կե-  
տերը, վոր կյանք եյին տալիս իրենց աղմուկով:  
Ծիծեռնակները չվել եյին գեղի տաք յերկըր-  
ներ:

Բարի յերթ, բարի ճանրա, սիրուն ծիծեռ-  
նակներ, մենք կսպասենք ձեզ նորից յեկող  
գարնանը...



## ՃԻ Թ-ՃԻ Թ Ը

I

Վեց կամ յոթ տարեկան հաղիվ կլինեյի յես  
այն ժամանակ: Մի չտեսնված չարաճճի եյի:  
Զարաճճին քիչ ե—մի կատարյալ «ավերիչ». այս-  
պես եյին ասում գոնե մեր տանն ու հարեան-  
ները իմ մասին, թեև յես այդպես չեյի համա-  
րում ինձ: Տանը բոլորն ել իրավունք ունեյին  
ինձ վրա, վորովհետև ամենից փոքրը յես եյի և  
վարձատրում եյին՝ ով ինչով կարող եր,  
սկսած հորեղբորս տղա Սարգսից:

— Ես ով ե եսպես արել, Համո, — խեթում  
եր վրաս մեծ յեղայրս, Դանելը, ցույց տալով  
իր վոտքի կապիչներից մինի կեսը, մի փայտի  
ծայրին մեխած: Մոռւթս կախում եյի, ունքերս  
հավաքում իրար—գիտեյի հետևանքը... Հանդարու  
մոտենում եր նա, զսպված գայրույթից նրա քը-  
թածակերը ալիք եյին տալիս, վոլորում եր ձեռքն  
ընկած ականջս, բարձրացնում, մինչև վոր վոտ-  
քերս կտրվում եյին գետնից, յես կախված նրա  
բռունցքից:

Յես Եյի մարակ շինել:

— Ես քու բաներդ չե՞... — զայրույթից կարմը բած հրում եր ցուցամատի ծնկով ճակատիս հայրս՝ ցույց տալով բերանը ջարդած կացինը կամ ուրագը:

Յես Եյի տաշ արել:

— Դու տափը չմտնե՞ս, բա... — խլում եր սայլս ձեռքիցս ու հարվածների տակ քաշ տալով հասցնում մորս մոտ մեծ քույրս, Աղիզը, ցույց տալու համար, թե վժնց յես իլկի լիսենը ակն Եյի շինել սայլիս համար, իսկ իրենք յերկու որ ե վիտուում են:

— Մեծ աղի, յես սրան կսպանեմ, վոր մին ել տեսնեմ գոմումը. դարմանն ենտեղով մին են արել, ցախակելը քաշ-քաշ արել, կոտրատել, թե ցաքան ենք անում, — սպանում եր Սարգիսը, հորեղբորս տղան:

Մերոնք բավական չեյին, պակասը լրացնում Եյին հարեանները: Լուսը բացվում եր թե չե դալիս Եյին իրար յետևից:

— Աղջի, ձեզ մատաղ, խալին, ել յերեխա ունեն, թե մենակ ձերն ա, ես ի՞նչ ա արել, — ցույց եր տալիս տղի պատուած շապիկը:

Ի՞նչ Եյի արել, կոխ Եյինք կացել:

— Յես սրա տերը չեմ, Ասթառամ, քե մատաղ, — շպրտում եր, մորս առաջը գցում նվա-

դած հավը: Մեզավոր Եյի, վոր քարս դիպել եր «պատահմամբ»:

— Աղջի, մին հենց քու ախաղերն ապրի, դուրս յեկ մին տես մեր վորցակի հալը: Ի՞նչ եր վորցակի հալը. լողացրել Եյի առվակումն ու բաց թողել. ու եսպես անվերջ... Փուշ Եյի դառել բոլորի աչքին: Որը մին եր՝ ես տեսուկ դեպքերը՝ հարյուր: Յեվ ամեն անգամ, ամենն իր ուղած ձևով դատաստանս տեսնում. եր, ով եր ձեռները բռնողը: Նրանց ծեծին ել, կասես, սովորել Եյի, լաց չեյի լինում, բայց հո, ամեն անգամ չեր հաջողվում լուռ տանել բոլորը: Սրա փոխարեն վրեժս ընկերներիցս Եյի հանում խաղի ժամանակ: Բայց այս ել միշտ չեյի մարսում. շատ հաճախ իմ ձեռքով ծեծվածների տնից հասակավորները հատուցանում Եյին ինձ, ինչպես հարկն եր ու յես որորվելով, թնդինդալով դալիս Եյի գեափի տուն՝ թթված, արցունքներնվ...

— Հը, կերամը, անուշ Եր, — դիմավորում եր մայրս հեղնական ժպիտն աչքերում. — լավ են արել, քեզ մատաղ, բեր տեսնեմ ձեռքդ են կուրել, թե վոտդ. դալա՛ը կենան դրա խփողի կըռները, բա ընչի յեն քիչ խփել: Լուսմ Եյի: Ել վժնց լաց լինեյի, վոր չեյին ցավակցում: Գուցե հենց այս եր պատճառը, վոր դրանից հետո աչք չեյի ճպում, թեկուզ գլխիս թարս ջաղաց աղա-

յին, արցունքի կաթիլ չեր կաթում՝ ինչ ել անեյին։ Մի բան չեյի կարողանում հասկանալ, թե ինչն եյի մեղավոր յես, վոր ամեն բան հետաքրքրում եր ինձ սայդն ել, ձին ել, յեզն ել մյուս կենդանիներն ել, մեծերի գործիքներն ել, վոր նրանց նման յես ել եյի ուզում՝ շինել, տաշել, լծել, հեծնել... Բայց իրանց համար ամեն բան կարելի յեր, ինձ համար՝ չե։ Ինչու իմ արածս վատ եր, նրանցը՝ լավ – չեյի հասկանում, չեյի հասկանում... Յերբ մենք մի եշ եյինք գտնում ու չորս-հինգ հոգով շարվում պոչից մինչև ականջները՝ վորոտում եյին – «Եհեյ, եղ հեյ-վանին ինչի՞ յեք չարչարում, կպամ, հո գիտեք...»։ Իսկ վոր իրենք եյին չորս կուժը վրան գցում, միջին ել նստում, կամ ջաղաց քշում բեռան տակ տնքալով, հարվածը հարվածի յետերից՝ են ժամանակ «լավ» եյին անում... Մի խոսքով մենք իրար չեյինք հասկանում։

Միակ հաշտ անձնավորությունը են տանը, վոր միշտ սրտացավ եր ինձ համար, վոր միշտ բռնում եր թաթս, գոզը քաշում, համբուրում ծեծված թշերս, սրբում կաթող արցունքներս՝ դա տատս եր. մի բարի, մի աննման կին։ Նա վոչ բարկանալ գիտեր, վոչ անիծել. ամեն ինչ աղաչանքով եր ասում, խնդրելով, «քե մատաղը» բերանին. Խլում եր ինձ — թե վոր մոտիկ եր

լինում — հարձակվողների ձեռքից ու իր հովանավորող թերի տակ առնում, բարկանում բոլորի վրա, ներում ու արդարացնում իմ արածս։ Յեվ եղքան ծեծն ու պատիժը ենքան չեյին ձնշում ինձ, վորքան թեավորում եր տատիս հոգանավորությունը։

Բայց շատ անգամ իմ ու տատիս մեջ ել եր թյուրիմացություններ պատահում, և եղ թյուրիմացությունը գլխավորապես թռչունների համար։ Տասս չեր սիրում, վոր բոլոր խաղալիքներից ու զբաղմունքներից ամենասիրելին ու հետաքրքին ինձ համար՝ թռչուններն եյին ու նրանց բները։ Գյուղում վոչ վոքի այնպես չեյի նախանձում, ինչպես նորածե տուն ունեցողներին, վորոնց տանիքների տակ ամեն գարնանք բազմաթիվ բներ եյին հյուսում սարյակներն ու ձնձուկները։ Մեր տունը հողե տուն եր. նրա սրահում ունեյինք միայն մի յերկու ծիծեռնակի բուն։ Ինչի՞ս եյին պետք։ Նրանց անեծքների մասին այնպիսի բաներ եր պատմել տատս, վոր՝ ով եր գլխից ձեռք վերցրել խեթ նայելու նրանց բներին։ Մնացած թռչունները վայրի եյին ու նրանց բներն ել գյուղից գուլս, թփերի մեջ ու ծառերի վրա. Բայց և այնպես որ չեր անցնում, վոր ձեռքս թռչնի ձագեր չընկնեյին։ Ժամերով նրանց համար մորեխ եյի վիճակում, որերով

բներ վորոնում: Բայց եղքանից վոչ մեկն ել արթնանալով՝ եգալ կենդանի չեյի տեսնում: Մի սև կատու ունեյինք. անտերը բոլորիցն ել գատարկ եր թողնում ինձ:

— Քե մատաղ, զամո ջան,—աղաջում եր տափս, — ճուտեր մի բոնիլ, մեղք են, ջանիդ մատաղ, նրանք ել իրենց մոր բալաներն են, կանիծեն քեզ:

— Զե, տատի, ծտերը չեն անիծում, ասում եյի, մենակ ծիծեռնակներն են անիծում. յես նրանց ձեռք չեմ տալիս:

— Ծտերն ել են անիծում, քե մատաղ, ձեռք մի տալ. բա իրանց բալաներին, վոր տանեն, չեն անիծի. բա դու իմ բալան ես, վոր քեզ գան ինձանից խլեն, տանեն, չեմ անիծիլ...

— Բա կանիծես, նամի:

— Բա ինչ կանեմ, քե մատաղ:

— Դե, դու կանիծես, նամի, ամմա ծտերը չեն անիծում. դժւ չասացի՞ր, թե մենակ ծիծեռնակներն են անիծում:

Տատս մի անգամ պատմել եր, թե ինչպես Շուշի տատը, յերեխա ժամանակ շարունակ ծիծեռնակի բներ եր քանդում. նրանք ել ենքան անիծեցին, ասում եր, վոր մի անգամ ել՝ յերկար ձողով բուն քանդելիս՝ ոճորքից մի բան ընկավ նրա աչքը ու, կուրացավ: Եղ, նրանց

անեծքն եր, ասում եր, նրանց մեղքիցը, վոր են խեղճ թոշունները չարչարվում են որ ու գիշեր յերկուսով՝ բուն շինում, ձու ածում, ճուտեր հանում, ու նա զալիս եր խփում, բունը քանդում, ճուտերը վեր ածում, կատվերեց անում:

Ո՞վ եր ականջ դնողը նրա աղաջանքին ու խրատներին վոր. վախենում եյի մենակ ծիծեռնակներից, ու նրանց բներին ել ձեռք չեյի տալիս:

## II

Գարունքն եր: Տավարը մինչև սար գնալը Աղբբի-Զորի գոմերումն եր: Տատս կովերն եր կթում, յես ել նրա մոտ եյի, իբր թե հորթարած:

Մի առավոտ, հորթերի յետևից գնալիս մի «Ճիթ-Ճիթի» բուն գտա՛ հինգ սիրուն, բայց գեռ շշահացած ձագեր մեջը: Ուրախությունից համբերությունս պահել չկարացի. բարձրացա մի քարի զլուխ ու սկսեցի ձեն տալ ընկերներիս.

— Հետ Գասի, հե Վարդոն... մի բուն եմ զըտել, մի բուն, մի բուն..

Գասին ու Վարդոն ինձանից պակասը չեյին. մեռած եյին բնի համար. անունը լսելուն պիս, հորթերը թողին՝ գլխապատառ, ձեռքները յետու առաջ անելով, իրար տուաջ կարելով, ընկնելով, բարձրանալով՝ թուան գեպի ինձ:

— Վարտեղ Ե, Համո ջան, վարտեղ, վարտեղ .. հարցնում եյին նրանք անհամբեր ու վազում: Նրանց պատասխանելու փոխարեն թռչկոտում եյի անդադար ու նկարագրում ձագելը.

— Մի լավ Են, մի լավը՝ մի լավը ...

— Համո ջան, միննինձ չես տա՛լ...միննինձ...

— Համո ջան, միննինձ չես տալ, չես տա՛լ...

Աղաչանք, պաղատանք, խոստումներ են, վորանում են, թե ինչ ե՞նի տեղը նրանց ել ցույց տամ. բայց դե գժվել եմ:

Մենակ, յերբեմն մեկին, յերբեմն մյուսին խոստանում եյի ձագերից մինը տալ: Իմ նկարագրությունս ու ուրախությունս ավելի յերտանջում նրանց:

Յեթե առավտավա կթի ժամանակը չլիներ ու հորթերի ծծելու յերկյուղը՝ գուցե վոչ մի բանով ել Գասին ու Վարդոն ինձանից չհեռանային:

### III

— Ի՞նչ անեմ. թե գնում եմ մեկ ել տեսնեմ ձագերը, — մտածեցի նրանցից բաժանվելուց հետո:

Մտածեցի ու սիրտս չհամբերեց. քայլերս ուղղեցի դեպի բունք: Վոր թփին մոտեցա, ավելի ծանրացրի քայլերս ու սկսեցի վոտքերիս ծայրերովը գնալ. Շունչս ինձ քաշեցի. սիրտս սկսեց

արագ բաբախել — յես ուզում եյի մորը բռնել բնի մեջ: Մոտիկ թփից հանկարծ մինը թռավ. — ճըթ-ճըթ, ճըթ-ճըթ...

Դա մայրն եր:

Մի անհայտ յերկյուղ միանգամից ինձ կալավ: Ընկերներիցս նկատվելու յերկյուղը մի կողմից, սրաիս արագ բաբախումն ու մոր անընդհատ ճըթ-ճըթոցը մյուս կողմից, միախառնված շփոթեցին: Յես չեյի կարողանում վորոշել՝ հետդառնամ, թե առաջ գնամ: Վախենում եյի մոր անվերջ ճըթ-ճըթոցը մատներ ուրիշներին բնի տեղը: Առաջ շարժվեցի: Ամեն մի քայլիս հետմայրն ավելի մոտ եր թռչում, ճըթ-ճըթացնում, ազմկում: Ինքս ինձ հաշիվ տալ չեյի կարողանում: Մի քայլ ել արի. ձեռքս մեկնեցի դեպի թռուփը, վորի մեջ բռնն եր: Ձեռքիս խշշշոցի հետ ձագուկները մեկնեցին իրենց վզները, լայն բաց արին դեղին սիրուն կտուցները և միաձայն ճըվ-ճըվացին...

Մի բան զարկեց զլսիս և ավելի մոտ ու ուժեղ լսեցի մոր հուսահատական ճըթ-ճըթոցը: Գլխարկս բարձրացավ. մազերս բիզ-բիզ եյին կանգնել: Այժմ համոզված եյի, վոր նա ինձ անիծում ե: Կարծես՝ յետ փախչել ել վախենում եյի. մի անորոշ ձայն բռնել եր ականջներս ու

թշում գլխիս մեջ։ Զգացի յերկրորդ հարվածը,  
յերրորդը, չորրորդը...

Աժմ պարզ գիտեյի, վոր մայրն եր թևահա-  
րում ինձ։ Յես ինձ նրանից թույլ եյի զգում  
այդ ըոպեյին։ Վուսո յետ դրի, վոր հեռանամ,  
փոքրիկ հերոսը նորից հարձակվեց ինձ վրա –  
կարծեց՝ թե ձագուկները տանում եմ հետո։ Գը-  
լուխս ցածրացը, ձեռքերս բարձրացը պաշտ-  
պանվելու, և հանկարծ ձեռքս ընկավ նա, ճիթ-  
ճիթը։ Թե ինչպես վայրկենական փոխվեց են  
ծանը զրությունս՝ դեռ մինչև հիմա յել չգի-  
տեմ։ Լոեց ճրթ-ճրթոցն ու թևահարոցը ու մի ու-  
րախ բացականչ գուրս թուավ իմ բերանից։

— Զան, ջա՞ն, ճիթ-ճիթը բռնեցի, ճիթ-ճիթը  
բռնեցի...

Այլ ևս վոչ նա յեր ձայն հանում, վոչ ել թե  
յես եյի վախենում։


Բոռնցը կրծքիս սղմած, մերթ համբուրե-  
լով, մերթ յերեսիս քսելով՝ շնչակտուր ներս ըն-  
կա բինան։

— Նանի, նանի, ճիթ-ճիթը, ճիթ-ճիթը, այ...

— Վայ, քե մատաղ, Համո, ճուտամեր կը-  
լինի, բաց թող, ջամանիդ մատաղ նանը, մեղք են  
դրա ճուտերը։

— Թող եստեղ կենա...

Թելով կապեցի սյունից, աեղավորեցի կաթ-



սայի տակ ու դուրս թռա։ Քիչ հետո բռնն ել  
իրա ձագերով մոր մոտ եր։

Յերկու բռպել չանցած՝ ամբողջ թաղի յերեխերը շուրջս եյին հավաքված։ Բոլորը նախանձում եյին ինձ։ Վոչ մի անեծք, վոչ մի սպառնալիք ու խոստում չկարաց վոչ նրանց ցրի մեր դռնից, վոչ ել թե ինձ հորթերը ուղարկի։

Ել ժոր եյի գնում։ Առաջ վոր գնում եյի՝ շատը բների ու ձագերի համար. հիմա հո, բունը կողքիս եր, ճիթ-ճիթն ել ձեռքիս։ Վերջը ելի տատս հնարը գտավ. խաթրս առավ, աղաչանքով համոզեց, վոր ինըը կիսամի ճիթ-ճիթիս, իսկ յես գնամ հորթերը։

Մի քթոցում, խոտի մեջ տեղափորեցի բունը ձագերով։ Կապեցի մոր թելլ քթոցի ճիպոտից ու բերանն ել ծածկեցի մի բարակ շորով, վոր սիրտը չճաքի։ Նա այլևս ձագերին չեր նայում, բնումը չեր նստում. հեռմ եր անդադար ու սիրտը բաբախում անասելի արագությամբ։

Այդ ամբողջ որը յես հանդի շատ տխուր եյի. սկզբի ուրախությունս կամաց-կամաց անհետացավ։ Հիշեցի, թե ինչպես ինձ անիծում եր ճիթ-ճիթը. հիշեցի նույնպես, թե վորքան անմեղ ձագերի մահվան պատճառ եյի դարձել։

— Յերանի թե բռնած չինեյի, մտքովս անցավ հարկարծ։

Տառս մի անգամ պատմել եր, թե մի կին

մի ծտի լեզու յեր կտրել՝ ու նրա վորդին ել անլեզու յեր յեղել։ Ես պատմությունն ել հիշեցի եղտեղ։ Հիշեցի են ել, վոր ասում եր շարունակ, թե անլեզուների տերը ամենից հզոր ե ու նա հոկում ե նրանց, լուսն նրանց անեծքը ու միշտ կատարում։ Ես բոլոր մտածմունքներից հետո սիրտս մի տեսակ վատ գառավ ու իմ մեջ հաստատ վճռեցի, վոր յերեկոյան, յերբ վերագաւնամ, անպատճառ յերեք անգամ պտուտամ զլխովս ու բաց թողնեմ ճիթ-ճիթին, բո՞ն ել տանեմ, զնեմ տեղը, վոր նորից որհնի ինձ։

Յերեկո չգառած՝ տուն յեկա եղ որը։ Սաստիկ անձրեխց ամբողջովին թրջվել, վողողվել եյի։ Ներս մտնելուն պես, վազեցի դեպի քթոցը, բայց նրա բերանը ծածկած չեր այլևս։

— Նանի...

— Անտեր անեմ կատաւն, չամո, տանը չեմ յեղել... սկսեց տատս, բայց յես ել ինձ պահել չկարացի, արտասունքներս խեղդեցին ու թափվեցին միանգամից։

Փոված եյին խեղճերի փետուրները։ Կապած թելի ծայրին եր մնացել նրա մի վատը։ Տասս դուր եր աշխատում ինձ միթթարել. Զեյի կարողանում մի ըովել անգամ մոռանալ խեղճ թռչնի վերջին հուսահատ ու ցավալի աղաղակը. չեյի մոռանում նրա անեծքը։

Ինչքան աղաջեց տատս՝ թույլ չտվի շորերս  
փոխեն, մինչև վոր քռւս տարավ եղակա:

VI

Ել չգիտեմ, ինչ եր յեղել:

Աչքս վոր բաց արի՝ տեսնեմ անկողնիս մոտ  
տատս և նստած՝ ձեռքը դրած ճակատիս: Ռւ-  
բիշ կանայք ել կային: Նա հենց ծպծկում եր  
շարունակ ինձ ու հուսապրում:

— Կլավանաս, քե մատաղ, կլավանաս, մի  
վախի...

Յես հիվանդացել եյի, և ասում եյին, թե մի  
քանի որ եր արգեն:

— Տատի, վոր լավանամ, ել բներ չեմ քան-  
դի, — յեղավ իմ առաջին խոսքս:



## ՆՈՐԱՀԵՏ

Մթնաժոռ եր, վոր հասանք անտառին: Վոր-  
սատեղը բավական հեռու յեր մեզանից. միենույն  
եր՝ տեղ հասնել չեյինք կարող այդ յերեկո, դրա  
համար ել վորոշեցինք գիշերել այդտեղ, ու թեք-  
վեցինք, կրակ արինք մոտիկ մեծ ծառերից մե-  
կի տակ: Կրակը շուտով թեժացավ և բոցի վոս-  
տյունները մերթ աղոտ, մերթ պայծառ ներկում  
եյին մեզ ցածից վեր, ներկելով մեզ հետ ել մո-  
տիկ թփերն ու ծառի ճյուղերը:

Գիշերը կարճելու համար՝ զրույց սկսեցինք  
վորսից, ու պատմելու հերթը ուրախությամբ  
զիշեցինք մենք հին վորսկան Միրաքին: Սա իր  
պատճառն ուներ: Միրաքը բոլոր վորսորդներին  
հատուկ շատախոսությունից ու պարծենկոտու-  
թյունից ազատ լինելուց բացի, այլև հազվագյուտ  
գեղեցիկ ու հետաքրքիր պատմող եր:

— Եսպես մի յերեկո յեր, — սկսեց նա: — Զմեռ-  
վա կեսն եր հասել, գեռ ձյուն չեր կաթել: Մեկ  
ել յեղանակը ցրտեց ու իրիկնադեմին ձյունն  
սկսեց թքոտել: Բայց ընկածը հալվում եր — գե-



տինը դեռ տաք եր: Հացի եյինք նստած իրիկունը սուփրի շուրջը, վոր մինը մեր փանջարան\*) թակեց: Գդալների խրթխրթոցից ու ախորժակով խփշոցից գլխի չընկանք առաջին անգամից: Բայց վոր մին ել թխկաց՝ «սուս»—ասաց հայրս ու ականջ բռնեց ձենին...

— Ավետ, եհե Ավետ, մի դուռը դուս յեկ, Ավետ...

Ավետը հորեղբայրս եր: Մինչև մենք կորուեյինք, թե ով եր, նա ճանաչեց:

— Վանես, դու յես, տուն յեկ:

Մի յերկու ըոպեյից դուռը բացվեց և զլուխն

\* Փանջարան—փոքրիկ լուսամուտ:

ու ուսերը սիպտակած մի մարդ տուն մտավ:  
— Ազչի, բաժին զցի. Վանես, նստի, —կարգադրեց հորեղբայրս:

Վանեսը վասները տափը թակեց, փափախը գլխիցը վեր կալավ ու մինչև թափ տալը, նայեց մին փափախին, մին ել՝ հորեղբորս, Ավետին ու ժպտաց.

— Տեսնում ես, Ավետ, սրա համար եմ յեկել ե. Ես նորահետը ճանկ չի ընկնիլ:

Հորեղբայրս ել ժպտաց:

— Նստի դեռ մին, նստի, հաց ուտենք:  
Հացից հետո հորեղբայրս խորհրդավոր կերպով, կասես, ինըն իրան հարցըրեց.

— Հը, ասում ես գնանք: Բան կճարենք:

Նայեց հարցական հայացքով հորս կողմը, Ըստ յերկույթին ուզում եր իմանալ և հորս կարծիքը:

Թեև հորեղբայրս արդեն միջահասակ մարդ եր, կնոջ, յերեխաների տեր, բայց ելի, միշտ հորս թույլտվությունն եր հարցնում մի բան անելիս, մի տեղով գնալիս—հայրս նըանից մեծն եր:

— Դու դաս ու բան չճարենք: Ասում են, խողերը, վոնց վոր տանու խողի բոլուկ, ճալեքը քանդում են:

— Գնացեք, Ավետ, —խոսեց հայրս, — մի բան,

վոր պարագ որեր են, գնացեք, թե զոչաղ ըլեք՝  
միս կուտենք:

Սկսեցին խորհրդավոր խոսել: Կիսատ խոս-  
քեր եյին ասում ու հասկանում իրար: Հայրն եւ  
մասնակցեց այդ խորհրդին: Վանեսի տրամա-  
դրությունն ավելի բարձրացավ:

— Թե գնում ենք, պետք ա վերև գնանք,  
վոր դատարկ չգանք,—ասաց հորեղբայրս հեղի-  
նակավոր տռնով,—թե չե ես մոտիկ տեղերը  
զուր կչարչարվենք..

Խորհրդակցությունը յերկար չքաշեց, Վորո-  
շեցին՝ հրացանի, վասոսի, գնդակի պատրաս-  
տություն տեսնել, իմաց տալ՝ ում հարկավոր  
եր, վոր ժամանակին ճամբար ընկնեն:

— Յես ել եմ զալի, Ավետ ամի, —ասացի  
յես, —զու ինձ խոսք ես տվել վորսի գնալիս  
տանես:

— Համա, վոր դու զնաս, անպատճառ պախ-  
րա կրերեք, —ծաղրեց հոյրս:

— Հա, հենց քո գնալու տեղն ա, —ավելաց-  
րեց մայրս, —գիտես թե դրանք ինչ ձորեր պատն  
մտնի, ինչ սարեր բարձրանան:

— Յես ել կարող եմ գնալ:  
— Կտանեմ, քեփդ մի կոտրի, Միրո, —վը-  
ռեց Ավետ ամին:

Մյուս որը յերեկոյան, յերբ գյուղում մար-  
դիկ տուն մտան, մենք դուրս յեկանք գյուղից:  
Ավետ ամին եր կարգադրել, թե ենպես դուրս  
գանք, վոր իսկի մեզ մարդ ել չպատահի:

Ճանապարհը պետք ե անցնեյինք գիշերով, վոր  
լուսաբացին վորսատեղը լինեյինք: Ամբողջ 20—  
25 վերստ ճամբար պետք ե կտրեյինք գիշերը:  
Ավետ ամու ընտրությամբ մեզ հետ եյին գյու-  
ղի ամենահայտնի յերեք վորսկանները, իրանով  
չորս: Մի հրացան ել ինձ համար ճարեց ու ձեռ-  
քըս տվալի: Կյանքումս դրանից յերջանիկ որ յես  
չեյի հիշում — յես վորսի եյի զնում հայտնի վորս-  
կանների հետ, այն ել մեծ վորսի: Ճիշտ ե, մին-  
չե այդ, թունորսի գնացել եյի, բայց հասկացո-  
գություն չունեյի մեծ վորսի մասին:

Բացի մեզանից — հրացանավորներից, չորս եր  
թոչկան տղաներ՝ գալիս եյին, իբրև վորս քշող-  
ներ:

Գնում եյինք շտապ ու զգույշ, լուռ ու վոտք-  
ներս թեթև վերցնելով: Հորեղբորս հեղինակու-  
թյունը բոլորն եյին ընդունում ու յենթարկվում  
նրա կարգադրություններին:

Խոսում եր շշուկով, շատ անդամ ձեռքի շար-  
ժումով: Յերբ նա կանգ եր առնում՝ նրա հետ  
ել կարդ եր առնում ամբողջ շարանն այնպիսի

ձշությամբ, վոր շատերը մեխվում ելին տեղ-  
ները մի վոտի վրա՝ մյուսը չհամարձակվելով  
գետնին դնել: Նոր ձյունը գզած բամբա-  
կի նման փովել եր կեսթիղաչափ ու լու-  
սավորել մեր չորս կողմբ: Մեկ-մեկ ձեռքի նշա-  
նով մոտ եր կանչում Ավետ ամին՝ Վանեսին ու  
հրացանի ծայրով ցույց տալիս սփոռոցի պես մա-  
քուր ձյունի վրա տպված հետքերը:

— Տեսնում ես... աղվես ա. են ջուխտ-  
ջուխտ հետն ել դյալա\*) յա...

Յեկ նա ձյունի վրա կարգում եր կենդանի-  
ների պատմությունը, թե վորը վոր կողմովն ե-  
գնացել և յերբ: Շատ տեղ այնպես համողված  
եր պնդում, վոր ասես թե ինքը տեսել ե անց-  
նելիս: Մի տեղ կանգնեց նա ու ինձ ձեռքով  
արակ: Յես մոտեցա իրան ու նա մատը մեկնեց  
դեպի առաջ.

— Տեսնում ես, հրեն:

Յես ուշ վորոշեցի նրա ցույց տված կետը,  
բայց վերջը տեսա թվի մոտ պազած նապատ-  
տակը, վոր բարձրանում եր հետի վոտների վրա  
ու կրծում նրա փափուկ ճղները: Մեկ-մեկ իր  
լոլոշ ականջները խլացնում եր ու դես ու դեն  
շըլում:

— Կարմաս...— մի թեթև ժպիտ դեմքին դե-  
մեց նա ինձ փորձող տոնով:

Յես մասամբ նապաստակի անսպասելի տես-  
քով, մասամբ ել Ավետ ամու առաջարկությու-  
նից շփոթված՝ կարմրեցի ու մեքենայորեն ձեռ-  
քը տարա հրացանիու: Բայց մինչկ յերեսս կառ-  
նեյի, նապաստակին զգաց մեր ներկայությունը  
և դուրս պղծավ: Յես անհարմար զգացի:

— Ավետ, յեղգամեն ես անմում Միքոյին, —  
ժպաց Վանիսը:

— Վոչինչ, — սիրտ տվավ Ավետ ամին, — մին-  
չեւ տեղ համնելը եղակես հարյուրը կպատահի.  
համ ել ափառս ա դրա վրա գյուղա փշացնելը:

Կցկուր խոսակցությունից հետո, նորից տի-  
րում եր խորհրդավոր լուռթյունն ու զգուշու-  
թյունը: Ով մի բան եր ուզում ասի, վազում,  
մոտենում եր ու հարցնում շշուկով: Թվում եր,  
թե մեր չորս կողմի ծառերն ել եյին լուռմ Ա-  
վետ ամու կարգադրությունները: Լուռթյունը  
խանգարում եյին մին-մին, մոտիկ ծառերից  
թռչող թառժաժ յեղած թռչունները՝ ձյուն թա-  
փելով ձյուղերից, կամ՝ աղմուկով թփերի միջից  
զուրս փախչող մոշահավերը, վորոնց խշխոցը  
մեզ միշտ խաբում եր, թե մի մեծ կենդանի յե-  
անպատճառ: Զյունալուս եր. են ամբողջ ճամ-  
բան ենպես անցանք, վննց վոր ցերեկով, Ավետ  
ամին հավատացնում եր, թե ճանապարհ անցնե-  
լու համար ամենահարմար ու ապահով ժամա-

\*) Կղաքիս:

նակը գիշերն ե—ամեն շառ ու շուրից ազատ:

Լուսադեմին մենք կանգնած եյինք մի բարձը սարի կատարի: Նոր յերևաց, թե մենք ինչ-քան եյինք բարձրացել ու հեռացել շրջապատի տափարակից: Մեր չորս կողմը խիտ անտառ եր փոված, վոր տեղ-տեղ իջնում, ձոր եր դառնում, տեղ-տեղ մեջք տալիս, բարձրանում, տեղ-տեղ նոսրանում եր, բացատներ կազմում:

Մեր առաջ անմիջապես իջնում եր անտառը դեպի ձորը, ենապես վոր մենք վերեից նայում եյինք ծառերի դագաթներին: Տեղ-տեղ անտառն ընդհատվում եր կտրտված քերծերով: Զորի մյուս կողմից մի ուրիշ լեռնաշարք ձգվում եր ու բավական հեռու մեր կանգնած տեղից միանում մեր կողմից գնացող սարերի հետ: Արամեն եսպես գոդ եր դառնում, — յերկու թաթերն իրար կպցնելով, Միրաքն անկյուն կազմեց: — Միրուն աեսարան եր. յես առաջին անդամն եր, վոր դժուվում եյի ընության մեջ, վորի տերերը կենդանիներն եյին, իսկ մենք գողունի ներս եյինք մտել նրանց աշխարհը, խանդարելու իրենց հանգիստը: Արեն սկսեց տաեղնոտել. կամաց-կամաց գուրս հանեց նա յերեսը. կասես թե մի հակա յեր, վոր կուացել եր յերկընքից յերկիր, մազերը փոել չորս կողմը ու ջուր եր խմում մի մեծ աղբյուրից: Զյունի յերեսին

վառվում եյին նրա մազերն ամեն ուղղությամբ:

— Ինչ վոր կա, եստեղ ե, այ, ես ճոճկումը, — մատը մեկնեց հորեղբայրս, — այ, ես երկու իրար վրա կոնած սարերի ծոցումը:

Անտառն այնտեղ ավելի խիտ եր, վլխի ձյունըն ավելի սպիտակ, քան մյուս տեղերում:

— Դու եսպես կկտրես ձորը, Ստեփան, ու դուրս գաս հրեն եե, են թալան,— շարունակում եր կարգադրությունը նույն տոնով Ավետամին. — դու ել, Սոսի, եսպես կգնաս մինչև Սանտաքարը...

— Գիղամ, — կտրեց Սոսին նրա խոսքը:

— Մենք ել կշարվենք ես թուշովը\*) մինչև ձորի բերանը: Վահես, դու կնսատես ներքի բյարումը\*\*):

Կարգադրություններն անեկուց հետո, շարժվեցինք առաջ, վոր ամեն մինս մեզ տված ուղղությամբ գնանք ու ժամանակին նշանակած դիրքերը բռնենք:

Ժամանակը շատ սահմանափակ եր: Մինչև հրացանափառներս մեր տեղերը համնելը՝ վորսը քշողները սեսի մեջքով պետք ե համնեյին սարերի թիկունքը, ուր դիրթ\*\*\*): բերծերը փա-

\*) Թուշ—ուղղություն:

\*\*) Բյաղա—անցք, ճամբա:

\*\*\*) Գիրթ—ուղղաձիգ, խիստ բեր:

կում եյին անցըք: Նրանց գլորած քարերից ու հարահոցից, այնտեղ գտնված վորսերը պետք է փախչեյին յերեք կամ չորս ուղղությամբ: Իսկ փախուստի ճամբաներում արդեն նստած պետք ելինեյինք մենք:

Ավետ ամին առաջուց եր խոստացել, նստեցնել ինձ այնպիսի մի դիրքում, վոր — ինչպես ինքն եր ասում — «վորսը գար կոխ տար ինձ»: Նա ինձ հավատացնում եր, վոր յեկող վորսը պետք ե առաջովս անցներ, հրացանիս ծայրին քսվելով, բայց յես այնքան կշփոթվեմ, վոր չեմ ել տեսնի նրան:

— Առաջին անգամը եղավես ել լինում, — ասում եր նա, — զոչաղ կաց, թվանքը ձեռքիդ կրդողա, քեզ չկորցնես:

Մյուսները ծիծաղում եյին իմ անփորձության վրա, ու խրատում, խորհուրդներ տալիս, վոր ցույց տան իրենց փորձվածությունը:

— Վոր տենաս չի կանգնում, մի թեթև կրծագաս, կկանգնի մի ծտի չափ, են վախտը պետք ա իրար գցես...

Յես հրճվում եյի ինձ ու ինձ այն հաճույքից, վոր, յեթե իրավ այդքան մոտ անցնելու լինի՝ ինչ կպրծնի ինձանից:

Նրանցից իմացողներ կային, վոր յես լավ նշանաձիգ եմ, բայց ասում եյին, նշանակու-

թյուն չունի այդ, կարող ես ասեղը միջիցը կես անել, բայց պախրիցը շեղվես 40—50 քայլի վրա: Սա ինձ ավելի յեր զարմացնում: Վերջն այնպես գուրս յեկավ, վոր նրանց զգուշացումները կասկած գցեցին իմ մեջ և յես զգում եյի, վոր շը փոթվելու յեմ:

Ես խոսակցության ու կարգադրությունների միջոցին հանկարծ. մի ստվեր յերեաց ու ծածկը մոտիկ ծառերի յետեւմ: Բնազդաբար բոլորս ցնցվեցինք ու ձեռքներս տարանք հրացաններին... Հորեղբայրս սեեւեց աչքերն ու մին ել, վոր ծառերի արանքում աչքովն ընկավ անցնող ստվերի մի մասը՝ վազըից ճանաչեց, վոր գել եր ու ձեռքը թափ տվավ:

— Ե՞ն, նահալաթ զրա մորթուն, թողեք կորչի, բարքա կարանք մի բան ուստ բերել՝ միս ու տենք:

Քիչ ել վոր առաջ կացանք, Ավետ ամին ձեռքով արավ, վոր կանգնենք: — Նա մեր առաջից եր գնում: Կանգնեցինք: Ինքը վոտները մին-մին փոխելով առաջ անցավ դեպի գելի անյած տեղը: Կանգ առավ նա եղտեղ, մի քիչ յետ ու առաջ նայեց, մի քանի բայլ առաջ գնաց, նայեց իր չորս կողմի ձյունին, վոր անարատ եր, նորից մի քանի քայլ յետ յեկավ ու ձեռքով արավ

Վանեսին ու Սոսուն: Յես ել մոտեցա նրանց  
հետ:

— Տեսնում ե՞ք պախրան ա. այ, նոր ա անցել, ջլիս նոր: Ես ել գելի հետն ա: Գլխի յեք բնկնում: Ես անտերը նրա հետօվն ա գնում:

— Յավաշ, հետր ճանաչում ա, գելք:

— Հմ, ճանաշում, քեզանից ու ինձանից լավ, Սոսի: Հոտ չի իմանում. ամմա հետը՝ մարդուց լավ ա քշում: Դե, դրա վախտը չի, տղերք. ես վոր գնաց, վորոեղ վոր ա հրես գուրս ա ցցելու եղ անտերը: Դե, շուտ արեք, Ստեփան, դու պետք ա վոազես, վոր չուշանաս, բավականին տեղ ա մինչև թալան<sup>4\*</sup>): Դե, վազ տվեք:

Տղերքը հրացանների միջից բռնած, անմիջապես խրվեցին անտառի մեջ։ Պետք է իջնելին ձորը ու այնտեղից ամեն մեկը գնար իր համար նշանակած անզօրութեանուու։

Նրանց գեալուց հետո, ինձ տարավ, ցույց  
տվավ իմ դիրքը:

— Կնստես ես կաղնու տակին, աչքդ՝ ես բաց  
տեղին։ Յեկող վորան եստեղով պտի անցնի։ Վա-  
խես վոչ, ի՞նչ ել գալու լինի։ Կարող ա խող ել  
լինի։ Թե բան ա, կարենաս վոչ հասցնես՝ ժաժ  
շգաս տեղիցդ, թող գա ինձ վրա, թե չե վոր մի  
պուճուը ժաժ եկար տեղդ, թեկուզ ուրիշ կողմ

Ել ըլի երեսը՝ ելի կտեսնի քեզ ու յետ փախչի։  
Դէ, ես ա, պահի գա, հա...

Ասաց ու գնաց իր տեղը բռնելու։ Տնաշենը,  
կասես խմաստուն եր։ Տասնըինդ ըոպէ անցած  
չեր լինի, վոր լսվեց քշող տղաների յերկաը ու  
անհամբեր ձայները.

— ζωαῖ, ιεկωվ հա, յեկավ հա՞յ, պախրան  
յեկա՞վ, զոչաղ կացե՞ք, յեկա՞վ, յեկա՞վ, ևս զոլի  
զոշովի՛, մեծ կադնու վըբա՞մ...

Այդ ձայներն ինձ ավելի շփոթեցրին, կարծում  
եմ, քան թե հալածված պախրին: Նայում եյի առա-  
ջիս փոքրիկ բացատին ու սպասում, թե հրես, հրես  
յերևալու յե նա, յեղթերուն, վորին պարզ պատ-  
կերացնում եյի աշխիս առաջին: Բայց չե, յսե  
ավելի եյի շտապում, քան յեկող պախրան. սրա  
համար ել թվում եր ինձ, թե ուշանում ե: Մի  
անհամբերություն ուստում եր ինձ, կասես թե  
դողում եյին ձեռներս: Նայում եմ, առաջիս ջոկ-  
ջոկ ծառերը խառնվում են իրար, գառնում մի  
գորշ մասսա, աչքերս ջրակալում են: Բացի սը-  
րանից, թվում եր, թե են ձորը լիքը ջուր ե  
գնում ու նրա վշշոցը բռնել եր ականջներս.  
մինչդեռ գիտեմ, վոր ծարավ մարդը հազիվ, թե  
մի խմելու ջուր գտնի այդտեղ:

... Յեկավ հա-ա-ա, դալիս ա հաս ա, դոչաղ  
կացեք, յեկա՞վ...


"*) Pm, m—parent*

Սիրտս, պարզ, խանդաբում եր ինձ: Գիտեմ,  
վոր հիմա ավելի քիչ ժամանակ եր մնացել մինչև  
պախրի յերեալը, քան քիչ առաջ եր, բայց հիմա  
ավելի քիչ եյի պատրաստ զգում նրան հանդի-  
պելու:

Յես արդեն նկարել եյի իմ մտքում այն  
պախրան, վոր դալիս եր հաղածված՝ պողերի  
չարդախը զլխին: Այդ ժամանակ լսեցի առաջին  
ծառերի շխշոց, մոշահավից թեթև, ձյունի մա-  
ղոց և... ծառերի ու թփերի արանքից ոճի ձկու-  
նությամբ գուրս սողաց մոխրագույն, ավելի  
շուտ մի սիրուն թռչուն, մի կարապ, քան չոր-  
քոտանի... Նա դեռ ամբողջովին չաղատած իր  
մարմինը ծմակից, նորից հնչեց.

— Յեկավ հա՛ա՛, յեկա՛վ, յեկա՛ա՛վ...

Վոնց վոր մի դաշույն, դաստակից բռնած,  
գուրս քաշես արագ իր պատյանից ու շրջես իր  
փայլկառն լայնությամբ՝ այնպես ել գուրս քաշ-  
վեց նա թփերից իր փախուստի թափով ու յե-  
տեսից լսվող ձայնի հետ՝ մնաց պլշած մի վայր-  
կյան գեպի ձայնը: Նրա ամբողջ մարմինը միան-  
դամից բուսավ իմ զիմաց փոքրիկ բացատի վրա:  
Յես մոռացա, թե ինչ պետք ե անեյի. իսկ նրա  
յետ նայելը՝ մի ծտի համբերությունից ել քիչ,  
վերջացավ ու նորից ուղղվեց, վոր ճամբան շա-  
ռունակի: Նրան փախցնող ճամբան իմ կանգնած  
տեղից տասը քայլից ավելի չեր լինի, բայց յես



մոռացել եյի, թե ձեռքիս հրացան կա: Ինձ յետ  
թողնելուց հետո միայն՝ յես անորոշ ձայներ ար-  
ձակեցի: Ասես համբ լինեյի: Հրացանս մեկնեցի

ու հուպ տվի ամուր, առանց նշան բռնելու: Յեթե պայթեր եր, միմնույն ե, ինչ պետք ե աներ պախըին. բայց զարմանալին այն եր, վոր չպայթեց: Հետո նկատեցի, վոր չախմախը չեմ բարձրացրել յես, թեև վոտը քաշել եմ ամբողջ ուժով:

Յեթե մի քանի վայրկյան ել յես հրացանու պահած լինելի նույն դրությամբ ձեռքում՝ գուցե ինձ թվար, թե անմիջապես խլացնող վորոտը իմ հրացանիս ձայնն եր և վոչ թե Ավետ ամունը, վոր լսվեց ինձ շատ մոտիկ: Զգիտեմ, ինչու, սպասում եյի, վոր յերկրորդ պայթյունը ևս պիտի հետեփ. բայց իզուր: Դրա փոխարեն լսվեց Ավետ ամու թափ ձայնը, դարձյալ հանդիսատ ու վճռական.

— Եհեյ, Վանես, յարալու յա, գալիս ա, գալիս ա, քեզ վրա՞մ...

Ավետ ամու ձայնից հետո՝ լոռությունն ու անշարժությունն ավելորդ եյին—բոլորս տեղահան յեղած, վազում եյինք դեպի վիրավոր յեղջերուն:

Յես ամենից շուտ հասա Ավետ ամուն:

— Ո՞ւր զնաց, Ավետ ամի, վորտեղին դիպավ:

Ավետ ամին զբաղված եր չիրխովը, զլսով ցույց տվավ ուղղությունը և բերանից յերկու

մալանչ բաց թողած ծխի արանքումն ասաց.— յետեփ կեսն աշջովս ընկալ մի պուճուր:

Այդ միջոցին մի հրացան ել պայթեց: Դա ել Վանեսի հրացանն եր: Յես ցած վազեցի հրացանի ձայնի ուղղությամբ: Մի քանի քայլի վրա տեսա կարմրած ձյունն ու յեղջերվի հետքն իրար խառնված: Սա Ավետ ամու խփած տեղն եր: Արյան կաթիլները տեղ-տեղ ընդհատվում եյին, բայց մի քիչ հետո նորից յերեսում:

Չորփ բերանում տեսա Վանեսին, նստած մի քարի վրա: Նրա գեմքին խաղում եր մի թեթև ժպիտ, ներքին անզսպելի բավականություննից սուլում եր ուրախ յեղանակ,

— Ի՞նչ յեղավ պախրան,—հարցրի յես:

— Հրեն, զնա բանիր,—ասաց նա ժպտալով:

Նայեցի ցույց տված ուղղությամբ, և ճիշտ վոր մի 20—25 քայլ հեռու, հենված մի ծառի բնի, նստած եր իմ տեսած յեղջերուն, կենդանի: Զհասկացա գաղտնիքը: Կատարյալ հրաշք եր թվում ինձ, թե ինչու յե նստած կենդանի յեղջերուն:

Մնացի տեղս մեխված: Վանեսը վեր կացավ, ժպտաց ինձ ու քայլերն ուղղեց դեպի նա: Յերբ բավական սոտեցանք մենք, վեր թռավ նստած տեղից, վոտքի կանգնեց հազիվ մի վայրկյան ու խուկ նվազոցվ նորից թմբաց գետնին:

Ավետ ամու գնդակը փշրել եր նրա աջ ազգը  
հիմքից, իսկ Վանեսինը՝ առաջի ձախ փոտը՝ ծըն-  
կից, փորը լաթի պես մնացել եյին կախված նրա  
մարմնի յերկու կողմերից:

Մենք նստեցինք նրա կողքին: Մի չքնաղ  
պահրակով եր, գեղեցկություն առելը քիչ ե...


Սկսեցի շոյել նրա աննման աչքերը, փոսկրոտ  
ու յերկայն դունչը, գեղեցիկ ոռւնգերը... ու նա  
իր հատհատ տնքոցի հետ սկսեց դողալով լիզել  
ձեռքերս: Չգիտեյի, շոյելս եր դուր դալիս նրան,  
թէ վախից աղերսում եր ինձ:

Վանեսը նայում եր բավականությամբ ու  
պատմում, թէ ինչպես... «Անտերը յերեք վոտնա-  
նի, հրեղեն եր դառեր, թուշում...», մինչև փոր  
«բարեբախտաբար» իր գնդակը փշրեց նրա մյուս  
փոտը: Մտքովս անցավ, թէ ինչքան լավ կլիներ  
ու բարեբախտություն, փոր դիպած չլիներ  
նրա գնդակը և պախրան փախած, ազատված  
լիներ:

Վրա հասավ հաստատ քայլերով Ավետ ամին  
ու խոժոռելով աչքերը նրա ջարդված փոտքերի  
մոտ լճացող արյանը՝ գոռաց Վանեսի վրա.

— Այ տղա, հայվան ես դու. ինչի յես եղ  
անտերի միսը փչացնում:

Ու մոտեցավ նա արագ, հրացանը ծառն ի  
վեր դրագ, դուրս քաշեց կողքից կախած դաշոյ-



նը, խեց ինձնից նրա սիրուն դունչը ու փղո-  
րեց հետեւ վրա կոպտորեն: Խանջալի սարսոռն  
քսոցի հետ՝ վարար դուրս ցայտող արյունը բա-  
վական հեռավորության վրա ներկեց սպիտակ  
ձյունը: Ինձ թված, թէ այդ խանջալի բերանն  
իմ մարմնի վրայով անցավ:

Ուզեցի մի խոսք ասեմ արգելելու՝ չկարացի։  
Յեվ այդ մարդը, վորին այնքան սիրում եյի  
յես, ու նա սիրում եր ինձ՝ այնքան սոսկալի  
յերևաց այդ բռպեցին, վոր թվում եր, թե ինձ ել  
կարող եր մորթել նա նույն անտարբերությամբ։

Մյուս որը յերկու խոզ ու մի կլատար ել  
խփեցինք, ու վերադառնք գյուղը։ Բայց յես  
չեյի մոռանում պախրի մահը։ Յերեկոյան մեր  
տանը բոլորը գերազանց տրամադրությամբ  
պատմում եյին հաջող նոր ահետի ու վորսի  
մասին և գլուխներն որորում համեղ խորովածի  
վրա։

Յես հրաժարվեցի խորովածից ու չասեցի, թե  
ինչու. իսկ իրենք ուտում եյին ու զարմանում,  
թե վճնց ե վոր լավ չի թվում ինձ պախրի միսը,  
քանի վոր նրանից համեղ միս՝ սուտ ե աշխարհ-  
քում։

Միրաքը վերջացրեց իր պատմությունը։ Գի-  
շերը բավականին անցել եր. պառկեցինք, վոր  
առավոտյան վաղ վեր կենանք ու ժամանակին  
համենք վորսատեղը։

## Մ Ա Յ Ր Ը

I

Աշունքվա սկզբներին եր. մեկ ել մի որ մեր  
Զանգին կորավ ու յերկու, յերեք որ չերեաց։

Դրանից հետո, յերբ առաջին անգամ մենք  
նրան տեսանք՝ նա ենքան եր փոխվել, վոր կար-  
ծեցինք, թե մեր շունը չի։ Նիհարած, կողքը  
կողքին կպած, ստինքները յերկար, թույլ կախ-  
ված՝ գուրս յեկավ նա սրահի մեծ սմբարի տա-  
կից ու յեկավ ուղիղ մտավ տուն։ Այսպես եր  
հայտնուած ամեն անգամ նա իր սովածությունը։


Մայրս, տեսնելուն պես, բացականչեց։

— Ընդ՛, ես շունը ցնդնել ա, երեխեք, տե-  
սեք մի վհրաեղից գուրս յեկավ։

Մենք — յես, յեղբայլներս ու հորեղբորս  
վորդիներն իմանալուն պես՝ գուրս վազեցինք  
գեպի սրահի մեծ սմբարը։

Մայրս մեր յետեից շտապ տան դուռը վա-  
կեց ու շանը լավ տվավ տանը, վոր նա մեզ  
չվսասեր։ Ամբարի յերեք կողմերից վորսող, աղ-

բի ու փոշու մեջ կորած, համարյա միաժամանակ հասանք շան բնին յես, Սիմոնն ու Ասոն, հորեղբորս վորդիները ու, դուրս քաշեցինք տմեն կողմից Զանգու լակոտները: Վեց հատ ձագեր բերել նա, վեց գեղեցիկ, զանազան գույնի լակոտներ: Մենք իսկույն բաժանեցինք մեր մեջ նրանց, թե վհրն ե վորինս ու ամեն մեկս մերինի համար անուն դաւանք նրանց նշաններին համապատասխան: Շունը տանից դուրս թողնելուց առաջ հորեղբորս տղան՝ Սաքոն յեկավ հեռացրեց մեզ, գեռ բարկանալով ել, թե՝ մի որ նա ձեր հախիցը կգա:



Նրանց աչքերը դեռ փակ եյին. բարձրացնում եյին դողդողալով իրենց փոքրիկ, սիրուն դնչիկները, կնճոռառում, ասես թե հոտոտելիս լինեյին ու տնօտնքում հազիվ լսելի:

Զանգին, բակի մեջ տեղը վընդվընդող ձագերին տեսնելուն պես՝ սպառնալի մռմռաց չորս կողմը նայելով ու, նախ նրանց բոլորին հավաքեց ամբարի մոտ, ապա թե՝ մեկ-մեկ ներս կը-րեց բունը:

Ել որ չեր անցնում, վոր մենք չգնայինք, պառկեյինք ամբարի կողքին ու լսեյինք նրանց քնքույշ և անվերջ մնացացը:

Մայրս շարունակ մեզ զգուշացնում եր.

— Հեռու կացեք ամբարից, — ասում եր, — ձեզ մատաղ, շունը կքրքրի. — Բայց մեր Զանգին ենքան մի խելոք շուն եր, վոր մեզ վրա իսկի չեր ել մռմռում, յերբ մենք միայն հեռվից եյինք նայում նրա ձագերին, մանավանդ, յերբ ինքն ել ձաղերի մոտ եր լինում:

Մի որ ել հայրս տանից դուրս գալիս ձեն տվավ Սաքոյին ու հրամայական ձեռվ կարգադրեց.

— Են լակոտները քանի կենում, մեծանում են անմեղ տեղը, երկու լավը, փարթամը կջոկես, մնացածը ուագ կանես: — Ասաց ու դուռը պինդ խփելով իր յետեկց՝ դուրս յեկավ, գնաց:

Սաքոն առանց մի հարց տալու, առանց մի խոսք ասելու՝ լսեց հորս տասձները: Ըստ յերեսույթին նրանք իրար հասկացան: Յես այդ խոսակցությունից միայն այն հասկացա, վոր խոսքը Զանգությունների մասին եր, բայց մինչև իմ հարցնելս, հորս գնալուց հետո, ինքը Սաքոն հայտնեց ինձ, թե՛ Համո, եսոր Զանգությունները «թաղելու» յեմ, զնա «բոլորին» իմաց արա, թող գան: Ասա, ով վոր մի-մի ջեր չեր, հոն, կամ կակալ կրերի՝ նրան կթողնեմ՝ թամաշա անի: «Բոլորը» իմ ընկերներս եյին, մեր թաղի իմ հասակակիցներս: Յես մին ուզեցի հարցնեմ, թե ինչնե, մեղք չե՞ն, մին ել, առանց յերկար մտածելու դուրս թռա տանից ենպես շտապով, վոր կասես թե ուշանալու նյի մի հանդեսից:

Մայրս ել այդ որն առավոտվանից տանը չեր, գնացել եր վերի թաղը՝ շոր ձեռլու: Սաքոն մի քանի անգամ, նույն իսկ, հիշեցրեց, թե քանի Անթառամ ազին տանը չի, պրծնենք, թե չե, վոր գա, վրա հասնի՝ ել չի թողնի ու հորեղբոր ձեռիցը պրծնիլ չեմ յես: «Հորեղբայրը» հերս եր:

Յերկու ըոպեյից հետո, մեր դուռը դարձավ մի կատարյալ հարսանքադուռ. ել թաղումը յերեխա չեր մնացել: Սաքոն վեցք արավ ու նրա մեջ հավաքեց նրանց բերած չիրը, հոնն ու ըն-

կույզը: Ապա սուրբ բահը ձեռքին, նա վեյբնումը (տավարի չոր աղբակույտը) փոքրիկ թոնրի ձեռվով սկսեց մի հոր կտրել: Յերեխաների ամբոխը նրան շըջապատած՝ ուշի ուշով հետևում եր բահի ամեն մի հարվածին: Ամեն մեկը կունում եր, նայում, վոր փոսի ներսը տեսնի, թեև բոլորն ել զիտեյին, վոր այնտեղ գեռ վոչինչ ըլկար: Զանգին թագնած եր մեղանից բավական հեռու, ու այնպիսի մի ձեռվ եր նայում ու հըսկում մեզ, վոր ասես թե ամեն ինչ հասկանում եր, ամեն բան զիտեր:

Հորը կտրեց, պատրաստեց: Սրանից հետո Սաքոն մոտեցավ շանն ու շրթունքները ծընծընելով, նրա զուխն ու մեջքը շոյելով ուզեց ձեռքի պարանովը նրան կապի. բայց Զանգին շարունակ խույս եր տալիս, զուխը պահում, իսկ վերջը, վոր տեսավ ձեռք չի վերցնում իրանից Սաքոն՝ սկսեց մոռալ վրան:

Մենք մի քիչ հեռացանք նրանից ու կես վախով, կես սարսափով հետեւում եյինք, թե ի՞նչ ելինելու վերջը:

— Յես վճնց անեմ բա ես անտերին, — խոսում եր Սաքոն ինքն իրեն հետ: Նա ու շունը իրար հսկում եյին. վոչ մեկը մյուսին թողնել չեր ուզում: Յետ նայեց նա, աջ ու ձախ գարձավ, ինքն ել չզիտեր, ի՞նչ հնարք եր վնասում:

— Համն, Համո, մին եղ պատն իվեր դրած  
յեղանը բեր եստեղ (մտածում եր նա՝ յեղանը  
վզին հարի ու կապի), ասեց ու դարձյալ շարու-  
նակեց աչքով բան փնտռել և յերբ, մեկ ել մա-  
րագի դրան մոտ ընկած դարմանի քթոցն աչ-  
քովս ընկավ մտքումը նոր բան ծագեց ու ավե-  
լի բարձր, վճռական ձայնով դիմեց.

— Լավ, լավ, Համո, ել յեղանը հարկավոր  
չի, վաղ տվեք մին են քթոցը, թե կարում եր,  
եստեղ բերեք:

Զգիտեյինք, թե ինչի համար ե ուզում քը-  
թոցը, միայն թե խմբով վազեցինք ու քթոցը  
քաշ տալով բերինք, հասցրինք Սաքոյին:

Նա քթոցը կողքահանց, բերանը ներքեւ ա-  
րած մոտեցրեց կամաց կամաց ու ելի սկսեց փա-  
ղաքշել շանը:

— Զանգի ջա՞ն, Զանգի ջա՞ն, տուլի, տուլի,  
ծիհ ծահ...

Մենք ել կարծեցինք, թե անկեղծ են Սո-  
քոյի փաղաքշանքները. շունն ել՝ խաբվեց նրա  
խոսքերից, պոչը սկսեց շարժել հաշտորեն, դր-  
լուխը ծուեց, աչքերը ճըպ-ճըպացրեց... Եղ ժա-  
մանակը մեկ ել են տեսնենք, վոր Սաքոն արագ  
շրջեց քթոցը Զանգու վրա, շունը մնաց տակին  
ու ինքը վրան նստեց:

— Դե, հիմա յեկեք եստեղ,—հրավիրեց նա

մեզ,—յեկեք, միք վախի, յեկեք վրան նստեցեք,  
յես գնամ լակոտնեցը հանեմ:

Մենք վախվիմելով մոտեցանք քթոցին. բայց  
հյուսված ճիպոտների արանքից վոր տեսանք  
Զանգու կատաղի աչքերը՝ վհչ վոք մեղանից  
սիրտ չարավ վրան նստի, վհչ ել թե Սաքոն  
կարաց համոզի մեզ:


— Դե վոր չեք դարիս, մի են քարն ել ա-  
մոտեցրեք ինձ:

Մենք՝ վոտքով, փայտով, մի կերպ յերկան-  
քի հատը մոտ գլորեցինք Սաքոյին: Նա մի կըռ-  
նովը քթոցը պահած, մյուսով հազիվ-հազ վեր  
քաշեց ու դրավ քթոցի մեջքին. մինն ել բերել  
տվավ ու դրավ նրա վրա. մի յերրորդն ել: Հե-  
տո ինքը գնաց ու մի կողմ ընկած գութանի հին  
եշն ել բերավ գցեց քթոցի մեջքին:

— Դե, տեսնեմ հիմա վճնց ա կծում,—ա-  
սաց ինքնաբավական կերպով Սաքոն ու մի մեծ,  
կեռ մահակ ձեռքին՝ ուղենորվեց դեպի ամբարը:

Ամեն մի քայլ անելիս նա յետ եր նայում  
դեպի քթոցը: Ըստ յերեսույթին վախում ել եր  
Սաքոն. ու ճիշտ վոր, քիչ հետո մենք տեսանք,  
վոր իրավացի յեր նրա վախը:

Շունը վընդ-վընդաց, մոմուաց, կլանչ-կլանչ  
յեկավ քթոցի տակից ու, մեկ ել, յերբ առաջին  
լակոտի ձայնն ականջովս ընկավ, վորին Սաքոն



Կեռ մահակով դուրս եր քաշել ամբարի տակից՝  
մի ուժեղ ճիչ լսեցինք, քթոցի ճիպոտների ճըթ-  
ճըթոցը ու մեկ ել՝ քարերի ուժեղ գռոցը։ Զան-  
գին դուրս ընկալ քթոցի տակից, ինչպես մի եղ  
առյուծ ու հարձակվեց Սաքոյի վրա։

Մենք սարսափով յետ վախանք մինչև կալի  
կեսը. Սաքոն ինքն ել յետ ու յետ զնաց տեղը,  
ձեռքի մահակը բարձրացրեց ու սկսեց շանը հան-  
դիմանելով պաշտպանվել.

— Ա՛ շշուն, ա շշուն... հայ անիծվես դու...  
Հանդիմանում եր նա Զանգուն, վոր նրա կա-  
տաղած զայրույթն իջեցնի։

Յերկար տևեց եղ կոխվը նրանց մեջ. շունն  
ուզում եր լակոտը մյուսների մոտ տանել՝ Սա-  
քոն չեր թողնում. Սաքոն ուզում եր հանած  
լակոտն ամբարի մոտից հեռացնել՝ շունը չեր  
թողնում, վերջը Սաքոն ելի խորամանկության  
դիմեց. Հենց եղանակ որահին մոտիկ բացվում եր  
գոմի դուռը. Տանից մեզ հաց բերել տվագ Սա-  
քոն ու սկսեց հաշտվել շան հետ. Կես հացից  
ավելի կտոր-կտոր արագ, առաջն ածեց. Զան-  
գին, կասես թե նորից ամեն բան սոսացավ,  
հաշտվեց. Անտեր անեմ սովածությունը, հաշ-  
տեցնում եւ Պոչը շարժելով բոլոր կտորները հա-  
վաքում եր նա մեկ-մեկ ու արագ կուլ տալիս։  
Հաշտվեցին՝ բայց Զանգին մարդկանց ել շան  
նման եր կարծում. կարծում եր, թե նրանք ել  
իրենց պես, յերբ անցնում ե բարկությունը ու  
հաշտվում են՝ դրա հետ ել մոռանում են իրենց  
առաջվա վատ մտքերը, վատ մտադրությունը,  
թե չե, չեր հավատա Սաքոյին։

Սաքոն հիմա գոմի դուռը բաց արագ. հայի կտորները սկսեց առաջվանից ավելի հեռու նետել գեպի գոմի դուռը: Շունը շարունակ հավաքում եր հացի պատառները ու յետ դառնում շտապ: Հետևյալ պատառը նա շեմքին նետեց, նրա հետևյալ՝ շեմքից ներս, յերբորդը՝ ավելի ներս: Ամեն անգամ արագությամբ վազում, վերցնում եր Զանգին ու նորից վայրկենապես յետ դառնում գունչը լիզելով, աչքը ձգում Սաքոյի ձեռքին ու աչքին: Շատ պատառներ նա ողի մեջ եր բռնում, վորի ժամանակ ուժեղ կերպով «զրլի»-ում եր նրա բերանը: Մի ներքին, լուս պայքար եր կատարվում նրանց մեջ: Սաքոն փատակցորեն ու հետևողական՝ աշխատում եր յերկարացնի ամեն պատարից հետո շան վերադարձի միջոցը, վորպեսզի չսխալվի իր հաշվի մեջ, իսկ Զանգին առանց մտածելու, առանց կասկածի, բնազդորեն աշխատում եր վորքան կարելի յեշուտ վերադառնալ, կարճացնել այդ միջոցը:

Վերջին մեծ կտորն ել ուժով ենպես ներս նետեց Սաքոն, վոր գոմի մթության մեջ պատառի թըմփոցի ու համարյա նրա հետ ներս թռչող Զանգու վազելու հետ՝ շրմփաց ու փակփեց գոմի դուռը:

Յետ դարձավ շունը: Փակված դռան յետևից իսկուն լովեց հուսահատ մազստոցն ու չանգըռ-

տոցը: Զանգին նոր, հանկարծակի զգաց, վոր խարեցին իրան ու մի սոսկալի բան պիտի կատարվի: Նա չմտաբերեց, չվերհիշեց, վորովհետեւ մըտածել չգիտել, բայց միանգամից նրան պատկերացավ, վոր առաջ ել այդպես են վարվել իրան հետ ու խլել, պակասեցրել իր ձագերը, թեև ինքը չեր տեսել, թե ի՞նչ ձևով: Անմիջապես, դռան յետևից հասնող լակոտների ձայնը հաստատեցին նրա վատ կասկածը մարդկանց մասին ու կատաղեցրին Զանգին: Նա վոռնում եր, կողկոնձում, կլանչ-կլանչ գալիս, դուռը կրծում, չանգուստում: Նա լալիս եր, աղաչում եր ու քանի գնում, ենքան աղիողորմ եր դառնում լակոտների ձայնի հետ: Իսկ Սաքոն, ասես թե վոչինչ, մի լավ բան եր կատարում: հանգիստ հանուեց մեկ-մեկ բոլոր ձագերին, յերկուսին թողեց, մնացած չորսին հատ-հատ թիու բերանն առավ, բերավ ածեց հորի մեջ:

Փոմն սկսեց ծածկել: Շան կաղկանչոցը հիմա մենք գոմի վերջիցն եյին լսում: Զագերի մնացը քանի գնում նվազում եր Սաքոյի վոտքերի տակ, ասես թե շատ հեռու տեղից եր գալիս: Նա լցնում եր փոսն ու կոխ տալիս: Քիչ ժամանակից հետո բոլորովին կարվեց ձագերի վոդոցը: ել վոչինչ չեյինք լսում:

Մեր առաջվա ուրախությունն ու աշխատու-

թյունն ել կորավ ու մենք առանց իրար հետ  
խոսելու, մեկ-մեկ հեռացանք, ցըվեցինք եղտե-  
ղից:

Սաքոն հիմա մի տեսակ հրեշ եր դասել իմ  
աչքում. չեյի կարողանում մոռանալ նրան:

II

Իսկական խելագար եր Զանգին, յերբ մի  
կերպ դուռը բանալուց հետո՝ դուրս ընկավ նա.  
Գնդակով շամփրվածի արագությամբ ներս քաշ-  
վեց ամբարի տակը ու բունը դատարկ տեսնե-  
լով՝ դուրս թռավ: Հոտոտեց յերկու ձագին, թո-  
ղեց ու վազեց աջ ու ձախ. ել անկյուն չթողեց,  
վոր չմտներ՝ չկային: Մեկ ել վազեց նա գեպի  
փեյինը. տեսարանը սարսափելի յեր: Նոր ծածկ-  
ված փոսի բերանից բարձրացող գոլորշին կասեռ  
թե շատ բան ասեց նրան ու նա մոտեցավ. ըս-  
կսեց հոտոտել ու արագ, նախ չանկերով, ապա,  
յերբ դա չոգնեց, բերանով դատարկել ամբողջ  
ծածկված փոսը մինչև հատակը:

Տանը բոլորիս զգուշացրին, վոր դուրս չը-  
դնանք և չմոտենանք, թե չե կարող եր բըքըել  
մեղ: Մենք սարսափահար ու հետաքրքիր նայում  
եյինք խմբված, պատուհանի ներսից:

Քանդեց նա փոսը մինչև հատակը ու մեկ-  
մեկ դուրս տվավ չորս խեղդոտված ձագերին.

սկսեց լիզել, մաքրել, հոտոտել... Մի քանի ան-  
գամ բերանով շրջեց դես ու դեն, ասես չեր հա-  
վատում յեղածին, ապա ընկավ նա նրանց մոտ:  
Յերբեմ-յերբեմ պղտոր հայացքով նայում եր  
նա թափված ձագերի դիակներին, նորից լիզումք  
Բավական հետո միայն, յերբ տեսավ, վոր ժամ-  
չեն գալիս՝ թողեց ու դանդաղ քայլերով հեռա-  
ցավ բակի մի անկյունը, վեր ընկավ ենտեղ:

Նա այնպես խղճալի՛ յեր այդ բռպելին...  
Մեկ ընկնում եր թազնում, մեկ վեր կենում,  
դունչը ձգում կողկոնձում, հաջում քարերի ու  
պատերի վրա:

Քիչ հետո նորից յեկավ ձագերի մոտ, նորից  
շուռ ու մուռ տվավ, լիզեց... ասես չեր հավա-  
տում, վոր սատկած են. նորից թողեց ու սկսեց-  
ծույլ-ծույլ հաջելով, վնդստալով բակի ես ան-  
կյունից են անկյունը վազել... Զրված ձայներ  
եր հանում նա եղ որը: Շատերն ասում եյին,  
թե շունը խելագարվել ե:

Եդ որը լափ չկերավ Զանգին, իսկ մյուս որը  
շատ հանգիստ եր ու անտարբեր: Մի անգամ  
միայն մոտեցավ նա չորս ձագերի դիակներին.  
սառը-սառը հոտոտեց մի յերկու անգամ ու պըղ-  
տոր հայացքը նրանց վրա պատեցնելով նայեց  
դեպի մեր տունը ու գնաց, թազնեց հեռու, հե-  
ռու: Նա իր պառկած աեղը յերբեմն-յերբեմն ա-

տամներով ամուր-ամուր կրծում եր գետնի հողը,  
ծամում, նորից թափում:

Ինչքան նրան կանչեցին լափի, շունը տեղի-  
ցը ժաժ չեկավ: Ամեն անդամ Սաքոյին տեսնե-  
լիս, յերկա՛ր ուղեկցում եր իր հայացքով նրան:

Մայրս ինքը վերցրեց լափի ամանը, տարավ  
մոտեցրեց Զանդիին և սկսեց փաղաքշել նրան  
քաղցր խոսքերով:

Մեր տանը ամենից շատ նա մորս եր սի-  
րում:

— Քնչի, քնչի, Զանդի ջա՞ն, Զանդի ջա՞ն...

Շունը վիզը յերկարացրեց, աչքերը կիսա-  
խոռի սկսեց լիզել մորս փոտքերը, փեշերը, ձեռ-  
ները, պոչն սկսեց գետինը թակել... Բայց նա  
տեղից շշարժվեց անդամ, կասես չեր տեսնում  
իր կողքին դրած լակի ամանը:

Մայրս կուացավ, սկսեց ափով շոյել նրա գը-  
լուխը, նորից հրավիրել լակի. նա տնքալու պես  
ձայն հանեց: Բոլորովին մոտ քաշեց մայրս տաշ-  
տակը, բայց նա իր արյունով լի աչքերով նա-  
յեց յերկար մորս յերեսին, ասես թե ուղում եր  
պատասխանի նրան, խոսի նրա հետ. բայց լե-  
զու չուներ... ու գլուխը նորից թեքեց լուս, ու  
զբավի կողքին. Ել չբարձրացրեց բոլորովին գլու-  
խը նա մեր կողմը՝ ինչքա՞ն մայրս անունը ալ-  
վավ: Հիշում եմ, վոր մայրս ել մի տեսակ զա-



ռավ. յեկավ մտավ տուն ու փոխված ձայնով  
արտասանեց.

— Քուանաս վոչ դու, Սաքն, մեղքի տակ  
կորցրիր մեզ:

Յես փոքր եյի, մորս փեշը բռնած, հիշում՝  
եմ, մի քանի անգամ բան հարցրի, նա չպա-  
տասխանեց. նայեցի յերեսին՝ արտասվում եր,  
աչքերը սրբեց: Հետո նա հորս դարձավ.

— Անխիղճ ես դու, անխիղճ. բա սիրտ կա  
քո մեջ. մնացածներն ել սովածությունից պետք  
ե կոտորվեն. խեղճ շունը նրանց ել չի մտիկ  
տալիս հիմա: Ի՞նչ եր սատանան սիրտդ մտել,  
տնաշենի մարդ, կմեծանային՝ կտայինը հարկան-  
ներին. կրակը գլխներիս ածեց... Վոտս կոտը-  
վեր, վոր են որը յես տանից դուրս չգնայի:  
Խեղճ հայվան...

— Շան աղաթն ա, ա կնիկ, — ծիծաղեց  
հայրս, — մի երկու որ եղակես կլինի:

Մայրս շուռ յեկավ, դուրս գնաց տնից:  
Մինչև յերրորդ որը են յերկուսն ել սատ-  
կեցին: Զորորդ որը՝ ել Զանգուն չտեսանք մեր  
դուանը:

— Անտեր շունն ել փչացավ, կորավ, մնա-  
ցինք անշուն, — ասաց դժկամ մի որ հայրս՝ ներս  
մտնելով:

Իսկ մի քանի որ հետո տավարածները լուր  
բերին, թե ձեր Զանգին են ա գետի ձորումը  
սատկած:



## ՑԱՆԿ

Մեր ծիծեռնակները . . . . .	3
Ճիթ-ճիթը . . . . .	19
Նորահետ . . . . .	33
Մայրը . . . . .	53

11242

ԳԻԱԸ 1 ՐՈՒԲ.

36-787:



ԳԵՎՈՐՔ ՄԵԾՅԱ

# НАШИ ЛАСТОЧКИ

РАССКАЗЫ

(на армянск. яз.)

Издание Сахелгами  
Тифлис — 1936 г.